



ՏԱՐԻՋԱՅԻՆ ՎԱԽԵՐ

Տարբեր տարիքային փուլերում երեխաները կարող են ունենալ տարբեր տեսակի վախեր: Տարիքային տվյալ փուլի անցման զուգընթաց այդ վախերը սկսում են կորցնել իրենց նշանակությունն ու ինտենսիվությունը:



ՏԱՐԻՋ | 0 – 12 ԱՄՍԱԿԱՆ

0-6 ամսականում փոքրիկը վախենում է կտրուկ շարժումներից, բարձր ձայներից, մայրիկի բացակայությունից:

7-12 ամսականում վախենալու են անսպասելի ձայները, օտար, անծանոթ մարդիկ, անծանոթ իրավիճակները և միջավայրը:

ՏԱՐԻՋ | 1-3 ՏԱՐԵԿԱՆ

Այս տարիքում վախենալու են ծնողներից հեռու լինելը, ծնողից բաժանվելը, ինչպես նաև կարող են ի հայտ գալ գիշերային վախեր:

ՏԱՐԻՋ | 3-6 ՏԱՐԵԿԱՆ

Երեխան վախենում է մենակ մնալուց, մտերիմների մահանալուց, ինչի արդյունքում կարող են ի հայտ գալ հիվանդանալու, աղետների վախեր:

ՏԱՐԻՋ | 6-10 ՏԱՐԵԿԱՆ

Ի հայտ են գալիս դպրոցական, սոցիալական վախեր. երեխաները վախենում են ուշանալ դպրոցից, պատասխանել դաս, ստանալ վատ գնահատական, մերժված լինել հասակակիցների կողմից և այլն:

ՏԱՐԻՋ | 10-13 ՏԱՐԵԿԱՆ

Սեփական մահվան հետ կապված վախեր, վախեր հիվանդություններից, աղետներից, կենդանիներից, գողերից: Ինչպես նաև տիպիկ են երևակայական վախերը՝ բացասական հերոսներից, այլմոլորակայիններից, դևերից և այլն:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

